

ՍՅՈՒՆԵՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՆ ՀԱՍԵԼ

Նոյեմբերի 2-5-ին Երևանում՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում, տեղի ունեցավ նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերի հանրապետական փուլը, որին մասնակցում էր Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը:

Կրոսավազք, փոխանցումավազք և ինքնաձիգի քանդում-հավաքում խմբակային մրցաձևերից թիմը գրավել է առաջին և երրորդ մրցանակային տեղերը: Կրթարանի 12-րդ և 11-րդ դասարանների աշակերտներ Արմեն Արզումանյանը և Գևորգ Հարությունյանը կրոսավազք (1000մ) և հրաձգություն մրցաձևերից, իսկ դպրոցի զինղեկ Վանիկ Աթայանը՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, արժանացան պատվոգրերի:

Թիմերը մրցել են նոնակի նետում, Ցկգ-ոց ուսապարկով փոխանցումավազք, ձգումներ պտտածողից, կրոսավազք (1000մ), ինքնաձիգի քանդում-հավաքում, հրաձգություն (օդամղիչ հրացանով) մրցաձևերում:

Ռազմամարզական խաղերն անց են կացվում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից, որին մասնակցում են հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարաններից ձևավորված հավաքական թիմերը ու նպատակ ունեն նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության կենցաղում արմատավորել առողջ ապրելակերպ, հայրենիքի պաշտպանության համար դաստիարակել և տալ ՀՀ ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված և պատրաստ երիտասարդներ: